



*Համարը* N 630-Ն  
*Տիպը* Որոշում  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2005.06.17/38(410)  
Հոդ. 710

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն  
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ  
*Վավերացնող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 18.06.2005

*Ընդունման ամսաթիվը* 12.05.2005  
*Ստորագրման ամսաթիվը* 30.05.2005  
*Վավերացման ամսաթիվը* 07.06.2005  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»*  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
7 հունիսի 2005 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 մայիսի 2005 թվականի N 630-Ն

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

- «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**
1. Հաստատել մշակութային արժեքների արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության անցկացման կարգը և չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
  2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

**Ա. Մարգարյան**

2005 թ. մայիսի 30  
Երևան

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով և չափորոշիչներով սահմանվում են մշակութային արժեքների (այսուհետ՝ արժեք) արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) անցկացման կարգը և չափորոշիչները:

2. Փորձաքննությունն իրականացնում են լիազորված պետական մարմնի կողմից հավատարմագրված մասնագետները՝ սույն կարգով և չափորոշիչներով նախատեսված արժեքների փորձաքննության տեսակներին ու չափորոշիչներին համապատասխան:

*(2-րդ կետը փոփ. 07.04.11 N 356-Ն)*

**II. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

3. Փորձաքննությունն իրականացվում է երկու՝ պարզ փորձաքննության և համալիր փորձաքննության եղանակով:  
4. Պարզ փորձաքննությունն արժեքի տեսողական (վիզուալ) ու մասնագիտական գրականության և այլ աղբյուրների ուսումնասիրման եղանակով իրականացվող փորձաքննությունն է:

5. Համալիր փորձաքննությունն արժեքի պարզ փորձաքննությամբ և տեխնոլոգիական՝ ֆիզիկաքիմիական ու կենսաբանական եղանակով՝ տեխնիկական միջոցներով իրականացվող փորձաքննությունն է: Համալիր փորձաքննությունն իրականացվում է պարզելու համար՝

- ա) հեղինակային ստորագրությունն ու նշումները, դրոշմներն ու կնիքները,
- բ) կեղծման, վերականգնման հետքերն ու նշանները,
- գ) ստեղծման վայրի, ժամանակի, հումքի, պատրաստման տեխնոլոգիայի մասին տվյալները:

**III. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

6. Արժեքների փորձաքննության չափորոշիչներն են՝

- ա) անվանումը, վերնագիրը,
- բ) հեղինակը,
- գ) վարպետը, արտադրողը, հրատարակիչը,
- դ) տիպը, ուղղությունը, դպրոցը,
- ե) ստեղծման ժամանակը,
- զ) ստեղծման վայրը,
- է) իսկությունը (բնօրինակ կամ կեղծ լինելը),
- ը) նյութը,
- թ) ֆիզիկական չափսերը (երկարություն, լայնություն, բարձրություն, տրամագիծ, քաշ), հարգը,
- ժ) արժեքի էթնիկական պատկանելությունը, ստեղծողի էթնիկ պատկանելությունը,
- ժա) տեխնիկական-տեխնոլոգիական բնութագիրը (ֆիզիկաքիմիական, կենսաբանական փորձաքննության արդյունքները),
- ժբ) պատրաստման տեխնիկան,
- ժգ) հեղինակի ստորագրությունը,
- ժդ) դրոշմը, կնիքը, արձանագրության հատուկ նշանները,
- ժե) առարկայի պահպանվածությունը (ամբողջական, մասնակի, վերականգնված՝ մանրամասն նկարագրությամբ),
- ժզ) առարկայի գինը,
- ժէ) առարկայի մշակութային նշանակությունն ու կարևորությունը:

**IV. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

7. Արժեքի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը (այսուհետ՝ պատվիրատու) արժեքի մասին փորձագիտական եզրակացություն ստանալու համար գրավոր դիմում է փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետին, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձին:

**(7-րդ կետը փոփ. 07.04.11 N 356-Ն)**

8. Դիմումում նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար՝ անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը, անձնագրի սերիան և համարը),

բ) առարկայի անվանումը, քանակը, փորձաքննության նպատակը՝ առարկայի իսկության պարզում, առարկայի արժեքն ըստ պատվիրատուի, հայտարարություն սեփականության մասին:

9. Դիմումին կից ներկայացվում են արժեքի 9 x 12 չափսի 2 գունավոր լուսանկար, ինչպես նաև արժեքին վերաբերող այլ տեղեկություններ և փաստաթղթեր (առկայության դեպքում), որոնք կօգնեն փորձաքննությանը:

10. Արժեքը պատվիրատուից ընդունվում է ժամանակավոր պահպանության, և տրվում է ստացական, որի ձևանմուշը հաստատում է լիազորված պետական մարմինը:

Ստացականը լրացվում է 2 օրինակից, որի մեկ օրինակը մնում է փորձաքննություն իրականացնողի մոտ:

11. Դիմումը գրանցվում է դիմումների գրանցամատյանում, որի էջերը համարակալված, կարված են և կնքված են լիազորված պետական մարմնի կնիքով:

12. Դիմումների գրանցամատյանը համարվում է հիմնական հաշվառման փաստաթուղթ: Գրանցամատյանում գրանցման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

13. Դիմումի գրանցման համարը տվյալ պատվիրատուի գործի ծածկագիրն է՝ գրանցման թվի, օրվա, ամսվա և տարեթվի հաջորդականությունը պարունակող նիշերով:

14. Գործը կազմվում է պատվիրատուի դիմումից, փորձագիտական եզրակացության պատճենից, արժեքի լուսանկարից և այլ փաստաթղթերից:

15. Գործը պահվում է անժամկետ: Փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետը, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում նաև՝ իրավաբանական անձը պատասխանատու է պատվիրատուի մասին տվյալների գաղտնիության համար:

**(15-րդ կետը փոփ. 07.04.11 N 356-Ն)**

16. Փորձաքննության տեսակն ընտրվում է արժեքի նախնական զննման արդյունքում՝ ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում: Փորձաքննության ընթացքում, կողմերի համաձայնությամբ, փորձաքննության տեսակը կարող է փոխվել:

17. Փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետի, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձի և պատվիրատուի միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

**(17-րդ կետը լրաց. 07.04.11 N 356-Ն)**

18. Փորձաքննության սկիզբ է համարվում ստացականը տալու օրը, իսկ փորձաքննության ավարտ՝ պատվիրատուին փորձագիտական եզրակացությունը հանձնելու օրը:

Փորձաքննության առավելագույն ժամկետ է սահմանվում 15 օրը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, կողմերի համաձայնությամբ, այն երկարաձգվում է որոշակի ժամկետով:

19. Փորձաքննության վճարի չափը և փորձաքննության անցկացման ժամկետի խախտման համար կողմերի փոխադարձ պատասխանատվությունը սահմանվում են պայմանագրով:

20. Փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետը, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձն արժեքի ընդունման պահին ունեցած վիճակի փոփոխման համար պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

**(20-րդ կետը լրաց. 07.04.11 N 356-Ն)**

21. Առանց սեփականատիրոջ գրավոր համաձայնության փորձաքննության ներկայացված արժեքը չի կարող օգտագործվել գիտական ուսումնասիրման համար, կամ չի կարող հրատարակվել դրա մասին տեղեկատվություն:

22. Փորձագետը պատասխանատու է փորձագիտական եզրակացության արժանահավատության և օբյեկտիվության համար: Փորձագետը կեղծ փորձագիտական եզրակացություն տալու համար կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

23. Եթե փորձաքննության արդյունքում բացահայտվում է, որ արժեքը գողացված է կամ գտնվում է հետախուզման մեջ, փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետը, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձը դրա մասին տեղյակ է պահում իրավապահ մարմիններին:

**(23-րդ կետը լրաց. 07.04.11 N 356-Ն)**

**V. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

24. Փորձաքննության տեսակին և փորձաքննության չափորոշիչներին համապատասխան իրականացված փորձաքննության արդյունքում պատվիրատուին տրվում է փորձագիտական եզրակացություն:

25. Փորձագիտական եզրակացությունը լրացվում է հայերեն՝ տպագիր, և ներառում է՝

ա) փորձագիտական եզրակացությունը (հնգանիշ համար),

բ) փորձաքննությունն իրականացրած հավատարմագրված մասնագետի անունը, ազգանունը, իսկ վերջինիս՝

իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը,

- զ) արժեքի անվանումը,
- դ) արժեքի գիտական նկարագրությունը,
- ե) արժեքի ստեղծման տարեթիվը (թվագրումը), հրատարակման տարեթիվը,
- զ) արժեքի ստեղծման վայրը՝ երկիրը, հրատարակության վայրը, հրատարակչությունը,
- է) արժեքի նյութը,
- ը) արժեքի ֆիզիկական չափսերը (երկարություն, լայնություն, բարձրություն, տրամագիծ), քաշը, հարգը, էջերի թիվը, սպաքանակը և այլն,
- թ) արժեքի պահպանվածությունը (ամբողջական, մասնակի, վերականգնված՝ մանրամասն նկարագրությամբ),
- ժ) արժեքի պատրաստման տեխնիկական, տեխնիկական-տեխնոլոգիական բնութագիրը (ֆիզիկաքիմիական, կենսաբանական փորձաքննության արդյունքները),
- ժա) հեղինակը (ստեղծողը),
- ժբ) արձանագրության, ստորագրության, դրոշմի, կնիքի վերծանությունը, հատուկ նշաններ,
- ժգ) ժողովուրդը, էթնիկական խումբը, դպրոցը,
- ժդ) արժեքի՝ իր տեսակի կամ տիպի մեջ առանձնահատուկ լինելը,
- ժե) արժեքի՝ պատմական, հնագիտական, ազգագրական, գեղարվեստական, կրոնական, մշակութաբանական, արվեստաբանական կամ գիտական հատուկ հետաքրքրություն ներկայացնելը,
- ժզ) արժեքի՝ պատմամշակութային զարգացման վկայագիր-վավերագրի նշանակություն ունենալը,
- ժէ) արժեքի՝ ազգային պատմամշակութային ժառանգության համար կարևոր նշանակություն ունենալը,
- ժը) համաշխարհային մշակութային ժառանգության համար հետաքրքրություն ներկայացնելը,
- ժթ) զինը (Հայաստանի Հանրապետության արժույթով),
- ի) փորձաքննություն իրականացնող հավատարմագրված մասնագետի, իսկ վերջինիս՝ իրավաբանական անձի հետ աշխատանքային պայմանագիր ունենալու դեպքում՝ իրավաբանական անձի կնիքը և ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ նաև հավատարմագրված մասնագետի ստորագրությունը),
- իա) տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

**(25-րդ կետը փոփ., լրաց. 07.04.11 N 356-Ն)**

26. Սույն բաժնի 25-րդ կետի «ժդ», «ժե», «ժզ», «ժէ» և «ժը» ենթակետերի պատասխանները փորձագիտական եզրակացության մեջ արտացոլվում են, եթե ներկայացված առարկան մշակութային արժեք է և համապատասխանում է նշված ենթակետերից որևէ մեկի պահանջին:

27. Փորձագիտական եզրակացությունը վավերական է արժեքի լուսանկարի առկայությամբ, որի շրջերեսին փորձաքննություն իրականացնող անձը լրացնում է արժեքի հիմնական չափորոշիչները (անվանումը, հեղինակը, ստեղծման տեղը, ժամանակը, չափսերը):

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**